

## Օնլայն հանդիպում գործընկեր դպրոցների 8-րդ դասարանների աշակերտների հետ

Սույն թվականի ապրիլի 27-ին տեղի ունեցավ համատեղ օնլայն հանդիպում Ֆիզմաթ դպրոցի, Սյունիքի մարզի գ.Սառնակունքի և Գեղարքունիքի մարզի գ.Դպրաբակի դպրոցների միջև: Հանդիպումն անցկացրեց ֆիզմաթ դպրոցի մաթեմատիկայի ուսուցիչ Նիկիտա Պողոսյանը, որին մասնակցեցին Սառնակունքի միջնակարգ դպրոցի ուսուցչուհիներ՝ Սոնա Հարությունյանն ու Արմիդա Հարությունյանը, Դպրաբակի ուսուցիչ Հրաչիկ Սաֆարյանը, ինչպես նաև գործընկեր դպրոցների 8-րդ դասարանների աշակերտները: Դասընթացը անցավ շատ հետաքրքիր և արդյունավետ ու ծառայեց իր նպատակին:

Դպրոցների 8-րդ դասարանների աշակերտները ծանոթացան ընկեր Պողոսյանի հետ և քննարկեցին առաջին առաջադրանքի խնդիրների լուծումները, ծանոթացան լուծման նոր եղանակների: Առավել ակտիվ աշակերտները ներկայացրեցին որոշ խնդիրների լուծումներ:

Առաջադրված հետաքրքրաշարժ խնդիրները զարգացնում են աշակերտների մտածողությունը, տրամաբանությունը: Բացի այդ, ազատ շփման միջոցով, ձևավորվում է նրանց բանավոր խոսքը և դառնում ավելի գրագետ:

Օնլայն հանդիպման անցկացման կազմակերպչական աշխատանքին մասնակցեց նաև ֆիզմաթ դպրոցից գործընկեր դպրոցների աշխատանքները համակարգող ընկեր Դավիթ Մինասյանը:

Շնորհակալություն ենք հայտնում կազմակերպվածության, ուշադրության համար և հուսով ենք, որ նման դասեր հաճախ կկազմակերպվեն:

**Արփինե Ավետիսյան,**  
**Սյունիքի մարզ, Սառնակունքի մ/դ – 9-րդ դասարան**